Ա. Լ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՇԱՐԱՀԱՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ

Շարահյուսությունը լեզվաբանության թերևս ամենաշատ բազմազանություններ ունեցող բաժինն է, քանի որ ուսումնասիրում է բառերի ու նախադասությունների կապակցման առանձնահատկությունները, յուրաքանչյուր միավորի ունեցած դերը տվյալ կառույցում, իսկ նախադասություններ, ինչպես հայտնի է, կազմվում են ամեն պահի և բազմաթիվ շարադասություններով: Այդ պատճառով էլ կարևոր ու միաժամանակ դժվար է լեզվաբանության այս բաժնի ուսուցումը, և այն հեշտ և ճիշտ սովորեցնելու համար անհրաժեշտ են գիտական և մեթոդական բարձր մակարդակ ունեցող դասագրքեր: Շարահյուսական նյութը նորովի մատուցելու նպատակ ունի Արտաշես Պապոյանի և Խաչիկ Բադիկյանի «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» ուսումնական ձեռնարկը[1]: Այն նախատեսված է ուսանողների, ասպիրանտների և առհասարակ հայոց լեզվի շարահյուսության հարցերով հետաքրքրվողների համար: Եվ իսկապես, գրքի պարզ և մատչելի շարադրանքը նպաստում է այն բանին, որ այն ըմբռնելի լինի նաև ոչ մասնագետին: Բնականաբար ձեռնարկը կազմված է բուհերում առկա «Ժամանակակից հայոց լեզու» դասընթացի նոր ծրագրին համապատասխան: Այդ ծրագրի համապատասխանող այլ դասագրքեր ևս կան: Մասնավորապես տարիներ շարունակ պարզ նախադասությունն ուսուցանվել է Մ. Սատրյանի, Ա. Գյուլբուդաղյանի, իսկ բարդ նախադասությունը՝ Գ. Գարեգինյանի հեղինակած գրքերով: Պետք է նշել, որ այս գրքերը ևս ունեն գիտական բարձր մակարդակ, սակայն նոր ժամանակները նոր պահանջներ են թելադրում: Ա. Պապոյանի և Խ. Բադիկյանը ձեռնարկը նախորդներից առաջին հերթին տարբերվում է սեղմությամբ և հակիրճությամբ, որոնք ի հաշիվ գիտականության չեն: Պարզապես ձեռնարկում նյութը քննվում է դասագրքի սահման-

[1] Պապոյան Ա., Բադիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն (ուսումնական ձեռնարկ), Երևանի հանձնարարի հրատակություն, Երևան, 2003, էջ 462:

ներում, ներկայացվում կոնկրետ սահմանումներով՝ մեզանում թե նախկինում և թե մեր օրերում երբեմն երևան եկող գիտական բանավեճերին ու տարակարծություններին վերաբերող ավելի քիչ անդրադարձներով:

Գիրքը բաղկացած է երկու մասից, առաջինը նվիրված է պարզ, իսկ երկրորդը բարդ նախադասության քննությանը: Պարզ նախադասությանը վերաբերող բաժնում ներածական հասկացությունների մեկնաբանումից հետո քննված են շարահյուսական կապակցության միջոցներն ու եղանակները, բառակապակցության հատկանիշները, շարույթը, նախադասության իմաստային, հնչերանգային և կառուցվածքային հատկանիշները, այնուհետև նախադասության անդամները և անդամ չհամարվող միավորները: Վերջում ներկայացվում են հոլովների շարահյուսական կիրառությունները:

Երկրորդ մասում նախ ներկայացվում են բարդ նախադասության կառուցվածքային և իմաստային հատկանիշները, բաղադրիչ նախադասությունների կապակցման միջոցներն ու եղանակները, այնուհետև երկրորդական նախադասությունների շարահյուսական գործառույթները: Վերջում քննվում են պարբերությունը, ինչպես նաև բարդ ստորադասական նախադասության, ուղղակի և անուղղակի խոսքի փոխակերպման առանձնահատկությունները:

Ինչպես երևում է թվարկվածներից, գրքում վերլուծված են շարահյուսական համակարգի ավանդական բոլոր բաժինները: Ձեռնարկում տեսական շարադրանքը ներկայացվում է համապատասխան օրինակներով, որոնց դերն ուսուցման գործընթացում չափազանց կարևոր է: Թեև գիրքը գրված է երկու հեղինակի կողմից, սակայն հնարավորինս պահպանված է միասնական մոտեցումը նյութին: Այս հանգամանքն ունի կարևոր նշանակություն հատկապես ուսումնական բնույթի աշխատություններում՝ սովորողին անորոշության մեջ չթողնելու ու հակասական տեսակետներին չբախվելու նպատակով:

Ունենալով թե՛ գիտական և թե՛ մեթոդական շատ արժանիքներ՝ գիրք զերծ չէ նաև ինչ-ինչ թերություններից, որոնք անշուշտ կարելի է վերացնել հաջորդ հրատարակություններում. այդ թերությունները ոչ թե վերաբերում են սկզբունքային հարցերի, այլ պարզապես արդյունք են տարբեր կարգի վրիպումների: Օրինակ՝ ածականի որոշչային կիրառությունը ներկայացնելիս (էջ 116) որպես որակական ածականներ բերվում են *կարմրաթուշ, թխամազ, որբան-*

վազ, արևահամ հարաբերական ածականները, և նույնիսկ *լացակումած* հարակատար դերբայը: Սակայն այս և նման կարգի անճշտությունները մեծ թիվ չեն կազմում, միգուցե նույնիսկ տպագրական վրիպակներ են (օրինակներում տպված են շղատառ որպես որակական ածականներ): Իսկ գիրքն իր ամբողջության մեջ հաջողված է, և կարող ենք հավաստել, որ արդեն ունենք շարահյուսությանը վերաբերող բուհական նոր ձեռնարկ նոր պահանջներին համապատասխան: